«Դարձիր Telcell Wallet բջջային հավելվածի օգտատեր և ստացիր 1.000/1.500 ՀՀ դրամ հետվճար Telcell Wallet հաշվառման հաշվին» անվանումով ակցիայի կանոններ

«Դարձիր Telcell Wallet բջջային հավելվածի օգտատեր և ստացիր 1.000/1.500 ՀՀ դրամ հետվճար Telcell Wallet հաշվառման հաշվին» անվանումով ակցիայի կանոններ

1. Ներածություն

1.1. «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) կազմակերպում է «Դարձիր Telcell Wallet բջջային հավելվածի օգտատեր և ստացիր 1.000/1.500 ՀՀ դրամ հետվճար Telcell Wallet հաշվառման հաշվին» անվանումով ակցիա: Ակցիայի նպատակն է ներգրավել նոր օգտատերեր, խթանել Telcell Wallet բջջային հավելվածի ակտիվացումը և վճարումների իրականացումը Telcell Wallet բջջային հավելվածի միջոցով, ինչպես նաև Telcell Wallet բջջային հավելվածի ակտիվ օգտագործումը՝ որպես վճարման եղանակ, «Երևան Սիթի» սուպերմարկետների ցանցում:

1.2. Ակցիայի կանոններ սահմանող սույն փաստաթուղթը (այսուհետ՝ Կանոններ) հանդիսանում է հրապարակային առաջարկ (օֆերտա)՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 451-րդ հոդվածի և 453-րդ հոդվածի 2-րդ մասի տրամաբանությամբ:

Հիմնական հասկացություններ.

1.3. **Կազմակերպիչ՝** Սույն կանոններով սահմանված ակցիայի կազմակերպիչն է «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ն:

1.4. **Մասնակից՝** «Telcell Wallet» բջջային հավելվածի այն օգտատերերը, որոնք համապատասխանում են սույն կանոնների պայմաններին: Ակցիային կարող են մասնակցել այն ֆիզիկական անձինք, որոնք ակցիայի մեկնարկի դրությամբ չեն հանդիսանում Telcell Wallet բջջային հավելվածի օգտատերեր: Ակցիային մասնակցելու իրավունք չունեն վերաբացված օգտատերերը:

1.5. **Ակցիա՝** Ակցիայի շրջանակում մասնակցության պայմանները կատարած յուրաքանչյուր նոր մասնակից օգտատեր ստանում է առաջին արշավի դեպքում 1.000 ՀՀ դրամի չափով, իսկ երկրորդ արշավի դեպքում՝ 1.500 ՀՀ դրամի չափով հետվճար /cashback/, որը մուտքագրվում է օգտատիրոջ Telcell Wallet բջջային հավելվածի հաշվառման հաշվին:

2. Ընդհանուր դրույթներ

2.1. «Telcell Wallet» բջջային հավելվածի օգտատերերի համար իրականացվող ակցիայի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը տրամադրվում է https://telcell.am/ կայքում:

2.2. Մասնակցելով ակցիային՝ մասնակիցն անվերապահորեն ընդունում է Կանոններով սահմանված պայմանները և դրույթները:

2.3. Կանոններին վերաբերող ցանկացած որոշում համարվում է վերջնական և անվիճարկելի:

2.4. Կազմակերպիչն իրավունք ունի ցանկացած պահի փոփոխություն կատարել Կանոններում, որի վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը կտեղադրվի ակցիայի 2.1 կետում նշված հարթակում:

2.5. Ակցիային մասնակցության համար որևէ վճար չի գանձվում:

2.6. Հետվճարը տրամադրվում է բացառապես օգտատիրոջ Telcell Wallet բջջային հավելվածի հաշվառման հաշվին հաշվեգրման ձևով և ենթակա չէ կանխիկացման, փոխարինման կամ փոխանակման այլ ապրանքով կամ ծառայությամբ:

2.7. Կազմակերպչի կողմից զեղծարար վճարման վերաբերյալ հիմնավոր կասկած ունենալու պարագայում օգտատիրոջ մասնակցությունը կարող է անվավեր ճանաչվել՝ առանց հավելյալ ծանուցման: Զեղծարար վճարման չափանիշները սահմանվում և որոշվում են Կազմակերպչի կողմից:

3. «Դարձիր Telcell Wallet բջջային հավելվածի օգտատեր և ստացիր 1.000/1.500 ՀՀ դրամ հետվճար Telcell Wallet հաշվառման հաշվին» անվանումով ակցիայի անցկացման փուլերը և մասնակցության պայմանները

3.1. Ակցիայի կազմակերպման փուլը սահմանված է 15/09/2026 – 15/11/2026 ժամանակահատվածում: Ակցիան ունի երկու ակտիվ փուլ: Առաջին ամսվա արշավն իրականացվում է 15/09/2026 – 15/10/2026 ժամանակահատվածում: Արդյունքների ամփոփման փուլն իրականացվում է 15/10/2026 – 15/11/2026 ժամանակահատվածում: Երկրորդ ամսվա արշավն իրականացվում է 15/10/2026 – 15/11/2026 ժամանակահատվածում: Արդյունքների ամփոփման փուլն իրականացվում է 15/11/2026 – 15/12/2026 ժամանակահատվածում:

3.1.1. Արշավին մասնակցելու համար անհրաժեշտ է կատարել հետևյալ քայլերը.

- Ակտիվացնել Telcell Wallet բջջային հավելվածը:
- Դրամապանակի ակտիվացումից հետո առաջին անգամ վճարում կատարել «Երևան Սիթի» սուպերմարկետների ցանցում: Վճարումը պետք է կատարվի առնվազն 10,000 ՀՀ դրամ սահմանաչափով՝ առաջին արշավի դեպքում, և 15,000 ՀՀ դրամ սահմանաչափով՝ երկրորդ արշավի դեպքում:
- Վճարումը կատարել Telcell Wallet բջջային հավելվածի միջոցով:

3.1.2. Յուրաքանչյուր մասնակից կարող է մասնակցել արշավին միայն մեկ անգամ և ստանալ միայն մեկ հետվճար: Հաշվեգրումը կատարվում է միայն մեկ անգամ՝ մասնակցի կողմից ակցիայի պայմանները առաջին անգամ բավարարելու դեպքում:

3.2. **Հետվճարի տրամադրման (հաշվեգրման) կարգը.**

3.2.1. Արշավների շրջանակներում նախատեսվում է ունենալ 1,000 նոր օգտատեր, որից 500-ը՝ առաջին ամսվա ընթացքում և 500-ը՝ երկրորդ ամսվա ընթացքում:

3.2.2. Տվյալ արշավը չի հանդիսանում վիճակախաղ կամ պատահական ընտրությամբ խաղարկություն, և հաղթողի ընտրություն, ուղիղ եթեր կամ randomizer-ի կիրառություն նախատեսված չէ:

3.2.3. Հետվճարը տրամադրվում է բոլոր այն մասնակիցներին, որոնք ամբողջությամբ բավարարել են արշավի պայմանները՝ մինչև սահմանված մասնակիցների առավելագույն քանակի (1000 մասնակից) սպառումը:

3.2.4. Հետվճարը հաշվեգրվում է արշավի պայմանները կատարելուց հետո առավելագույնը 30 օրացուցային օրվա ընթացքում:

3.2.5. Հետվճարը տրամադրվում է բացառապես այն մասնակցին, որի տվյալներով իրականացվել է Telcell Wallet բջջային հավելվածի ակտիվացումը և համապատասխան վճարումը. այն չի կարող փոխանցվել կամ սեփականության իրավունքով տրամադրվել լիազորված երրորդ անձին:

3.2.6. Եթե մասնակիցը հրաժարվում է իրեն հասանելիք հետվճարից, ապա այն չի հաշվեգրվում, չի փոխարինվում որևէ այլ հատուցմամբ և չի փոխանցվում այլ անձի:

3.3. **Հետվճարի մերժման հիմքերը.**

3.3.1. Կազմակերպիչը կարող է մերժել հաշվեգրումը համապատասխան հիմնավորմամբ և չտրամադրել հետվճարը, եթե առկա են հետևյալ պայմաններից որևէ մեկը.

- Մասնակիցը չի բավարարում ակցիայի մասնակցության պայմաններին:
- Ներկայացված կամ համակարգում առկա տվյալները թերի, կեղծ կամ ոչ ճշգրիտ են, ինչի պատճառով հաշվեգրումը տեխնիկապես հնարավոր չէ կատարել:
- Գործարքը չեղարկվել կամ վերադարձվել է:
- Առկա են խարդախության, չարաշահման կամ ակցիայի պայմանների շրջանցման հիմնավոր կասկածներ:
- Մասնակցի Telcell Wallet հաշվառման հաշիվը արգելափակված է կամ հնարավոր չէ նույնականացնել:

«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ մասին լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք այցելել https://telcell.am/ կայք կամ զանգահարել +374 60 272222, +374 60 272223 հեռախոսահամարներով:

«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ն վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից: